

Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

Ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթեր*

- 1 Կազմակերպության կանոնադրությունը
- 2 Իրավաբանական անձի պետական գրանցման վկայական՝ ներդիրներով
- 3 ՀՎՀՀ-ն (հարկ վճարողի հաշվառման համար) հաստատող փաստաթուղթ, եթե ՀՎՀՀ-ն ներառված չէ պետական ռեգիստրի գրանցման վկայականում
- 4 Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձի/անձանց տվյալ պաշտոնում նշանակման մասին հրաման (հրամաններ) կամ որոշում (որոշումներ)/որոշումից քաղվածք**
- 5 Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ
- 6 Լրացուցիչ տեղեկատվություն՝ այդ թվում 10% և ավել բաժնեմասնակցություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման վկայական (անհրաժեշտության դեպքում նաև ՀՎՀՀ և կանոնադրություն)՝ իրավաբանական անձանց դեպքում: Տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ 5-րդ կետում նշված դեպքերի
- 7 Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (լիցենզիա, լիազորագիր և այլն)

Հավատարմագրային կառավարման հաշիվ բացելու համար հավատարմագրային կառավարչի կողմից բանկ են ներկայացվում

- Կառավարման հիմնադրի 1-3 կետերում նշված փաստաթղթերը
- Հավատարմագրային կառավարման պայմանագիրը
- Հավատարմագրային կառավարման պայմանագիրը ստորագրած անձանց անձը հաստատող փաստաթղթեր
- Եթե հավատարմագրային կառավարումը իրականացվում է իրավաբանական անձի կողմից, բանկ են ներկայացվում նաև հավատարմագրային կառավարումը իրականացնող իրավաբանական անձի 1-7 կետերում նշված փաստաթղթերը
- Կառավարման հիմնադրի հավատարմագրային կառավարման պայմանագիր ստորագրելու իրավասություն ունեցող անձի իրավասությունները հաստատող փաստաթուղթ, եթե վերջինիս իրավասությունները նշված չեն կառավարման հիմնադրի կանոնադրությունում կամ պետական գրանցման վկայականում

Անվճարունակության հաշիվ բացելիս, բանկ են ներկայացվում

- Անվճարունակ ճանաչված ընկերության 1-3 կետերում նշված փաստաթղթերը
- Դատարանի որոշումը՝ ընկերության անվճարունակ ճանաչելու վերաբերյալ
- Դատարանի որոշումը անվճարունակ ճանաչված ընկերության կառավարիչ նշանակելու վերաբերյալ, ինչպես նաև վերջինիս անձը հաստատող փաստաթուղթ

* Բանկ են ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները: Բանկում պահպանվելու համար փաստաթղթերի պատճենները պատրաստվում են բանկի աշխատակցի կողմից: Բանկ կարող են ներկայացվել նաև վերոնշյալ փաստաթղթերի պատճենները, որոնց վրա պետք է պարտադիր դրված լինի Հաճախորդի ղեկավարի ստորագրությունը և կնիքը «առկայության դեպքում», «իսկականի հետ ճիշտ է» նշումով: Եթե Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները կնքված չեն, պատճենված փաստաթղթի յուրաքանչյուր էջի վրա դրվում է Հաճախորդի ղեկավարի ստորագրությունը: Փաստաթղթերի պատճենները կարող են բանկ ներկայացվել նաև նոտարական վավերացմամբ:

** Տվյալ փաստաթուղթը չի պահանջվում այն դեպքում, եթե տվյալ ներկայացուցչի անունը նշված է Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականում:

Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթեր***

1. Կազմակերպության հիմնադիր փաստաթղթեր (կանոնադրություն, պայմանագիր կամ այլ փաստաթուղթ, որը նախատեսված է իրավաբանական անձի գրանցման երկրում):
2. Իրավաբանական անձի պետական գրանցման մասին վկայող փաստաթուղթ:
3. Հարկային մարմնում հաշվառման փաստաթուղթ:
4. Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձի/անձանց տվյալ պաշտոնում նշանակման մասին հրաման (հրամաններ) կամ որոշում (որոշումներ)/որոշումից քաղվածք: Տվյալ փաստաթուղթը չի պահանջվում այն դեպքում, եթե տվյալ անձի անունը նշված է պետական գրանցումը վկայող փաստաթղթում:
5. Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ:
6. Լրացուցիչ տեղեկատվություն՝ այդ թվում 10% և ավելի բաժնեմասնակցություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման վկայական (անհրաժեշտության դեպքում նաև ՀՎՀՀ և կանոնադրություն)՝ իրավաբանական անձանց դեպքում
7. Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (լիցենզիա, լիազորագիր և այլն)

*** Բանկ են ներկայացվում վերոնշյալ փաստաթղթերի թարգմանությունները նոտարական վավերացմամբ: Ռուսերեն լեզվով կամված փաստաթղթերը կարող են Բանկ ներկայացվել նաև առանց թարգմանության: Փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները) պետք է վավերացված լինեն ապոստիլով: Եթե փաստաթղթերը տրվել են ԱՊՀ երկրներում, տվյալ փաստաթղթերի պատճենները Բանկ կարող են ներկայացվել նաև նոտարական վավերացմամբ: Փաստաթղթերը (փաստաթղթերի պատճենները) պատճենները կարող են վավերացվել նաև Հյուպատոսի կնիքով:

Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող փաստաթղթեր****

1. Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականը՝ ներդիրներով
2. ՀՎՀՀ-ն (հարկ վճարողի հաշվառման համար) հաստատող փաստաթուղթ, եթե ՀՎՀՀ-ն ներառված չէ պետական հաշվառման վկայականում
3. Անձը հաստատող փաստաթուղթ
4. Սոցիալական քարտ, վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան տեղեկանք
5. Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում

****Բանկ են ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները: Բանկում պահպանվելու համար փաստաթղթերի պատճենները պատրաստվում են բանկի աշխատակցի կողմից: Բանկ կարող են ներկայացվել նաև վերոնշյալ փաստաթղթերի պատճենները, որոնց վրա պետք է պարտադիր դրված լինի ԱԶ ստորագրությունը և կնիքը «առկայության դեպքում», «խսկականի հետ ճիշտ է» նշումով: Եթե ԱԶ կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները կնքված չեն, պատճենված փաստաթղթի յուրաքանչյուր էջի վրա դրվում է ԱԶ ստորագրությունը: Փաստաթղթերի պատճենները կարող են բանկ ներկայացվել նաև նոտարական վավերացմամբ:

Ժամանակավոր հաշիվ բացելու համար Բանկ ներկայացվող փաստաթղթեր*****

1. Հիմնադիրների կողմից հաստատված կանոնադրություն
2. Ստեղծվող իրավաբանական անձի անունից գործելու՝ իրավասությունը հաստատող փաստաթուղթ
3. Ստեղծվող իրավաբանական անձի անունից գործող անձի՝ անձը հաստատող փաստաթուղթ
4. Լիազոր պետական մարմնի կողմից տրված՝ իրավաբանական անձի անվանման պետական գրանցման մասին որոշում

***** Բանկ են ներկայացվում փաստաթղթերի բնօրինակները: Բանկում պահպանվելու համար փաստաթղթերի պատճենները պատրաստվում են բանկի աշխատակցի կողմից: Բանկ կարող են ներկայացվել նաև վերոնշյալ փաստաթղթերի պատճենները, որոնց վրա պետք է պարտադիր դրված լինի իրավաբանական անձի անունից գործող անձի ստորագրությունը և կնիքը «առկայության դեպքում», «խսկականի հետ ճիշտ է» նշումով: Եթե Հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները կնքված չեն, պատճենված փաստաթղթի յուրաքանչյուր էջի վրա դրվում է իրավաբանական անձի անունից գործող անձի ստորագրությունը: Փաստաթղթերի պատճենները կարող են բանկ ներկայացվել նաև նոտարական վավերացմամբ: